

**Չարց** Բնակիչ-բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ մարելուց և այդ մասին մատակարարին հայտնելու դեպքում, ե՞րբ է մատակարարը պարտավոր վերսկսել գազամատակարարումը:

**Պատասխան** Բնակիչ-բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ մարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո, մատակարարը պարտավոր է բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը վերսկսել հնարավորինս կարճ ժամկետում՝ սակայն ոչ ուշ, քան 36 ժամը: Գազամատակարարումը վերսկսելուց առաջ մատակարարը կարող է տեղում ստուգել բնակիչ-բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը: